ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Բազում **համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Բազում	Ավագանու հերթական նիստ	24,02,2020	11:00	Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճ

ՕՐԱԿԱՐԳ

2020 թ. Փետրվարի 24-ին՝ ժամը 11.00-ին Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 11.00

1.Բազում համայնքի ավագանու 2020թ. թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ս. Հարությունյան

2.Համայնքի բնակչին դրամական օգնություն ցուցաբերելու մասին

զեկ. Ս. Հարությունյան

3.Հողամասն աճուրդ վաճառքով օտարելու մասին

զեկ. Ս. Հարությունյան

4.Բազում համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին

զեկ. Ս. Հարությունյան

ՆԱԽԱԳԻԾ 07-Ա

ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 2 նիստի օրակարգը:

1. Թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Համայնքի բնակչին դրամական օգնություն ցուցաբերելու մասին

3. Հողամասն աճուրդ վաճառքով օտարելու մասին

4. Բազում համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին

ՆԱԽԱԳԻԾ 08-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , համայնքի ավագանու 2014 թ-ի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ Բազում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումը և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչ Ռուզաննա Ասատրյանի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ 45000 /քառասուն հինգ հազար / ՀՀ դրամի չափով:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ն

ՆԱԽԱԳԻԾ 09-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասին 21-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Բազում համայնքի 06-023-0003-0022 ծածկագրի 1-ին փողոց 1-ին նրբանցք 28 հասցեի 0,0216 հա բնակավայրերի այլ հողատեսքը աճուրդ վաճառքով օտարելու:

Մեկնարկային գինը սահմանել 48000 ՀՀ դրամ:

Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափով՝ 2400 դրամ: Նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափով 2400 դրամ: Մասնակցության վճար սահմանել 2000 դրամ: Աճուրդը կազմակերպելու մասին տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն թերթում:

ՆԱԽԱԳԻԾ 10-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՎԵԼՎԱԾ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
24.02.202 Թ ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ

Բազում համայնքը հնագույն բնակավայր է: Այն տեղակայված է Բազումի լեռների ստորոտի հյուսիս արևելյան մասում, մարզկենտրոն Վանաձորից 8 կմ հեռավորության վրա: Շրջապատված է Բազումի լեռներով, ծովի մակերևույթից բարձր է 1550մ:

Վարչական տարածքը հա	*Գյուղնշանակության հողատարածք հա*	*վարելահող հա*	*խոտհարք հա*	*արոտ հա*	*այլ հա*
4208.89	2812.48	210.99	373.16	1914.91	313.42

Համայնքն ունի 487 տնտեսություն, 1916 բնակիչ, որից մշտապես ներկա 1285 մարդ /667 տղամարդ, 618 կին/: Համայնքի թոշակառուների թիվը կազմում է 211, նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 41:
Համայնքի աշխատունակ բնակչության թիվը կազմում է 1054 մարդ, որից՝
գյուղատնտեսական ինքնազբաղվածություն 410 մարդ
պետական մարմիններում 150 մարդ
տեղական ինքնակառավարման մարմիններում 10 մարդ
մանկապարտեզում 5 մարդ
դպրոցում 15 մարդ
պայմանագրային զինծառայող 50 մարդ
մասնավոր սեկտրում 30 մարդ
չունեն զբաղվածություն 414 մարդ:

- 2019թ-ի ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալը

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	*Ցանքատարածության չափը*	*Արտադրանքի քանակը*
կարտոֆիլ	11,0 հա	702 ցենտ.
բանջարեղեն	2.25 հա	260 ցենտ.
պտուղ	22.24 հա	152 ցենտ
խոտ		10000 ցենտ

Համայնքն ունի

Անասնատեսակ	*գլխաքանակ*
Խոշոր եղջերավոր անասուններ	246 որից 164 կով
Մանր եղջերավոր անասուններ	44
թռչուններ	752
մեղվաընտանիքներ	214

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է 143 աշակերտ: Դպրոցն ունի 36 աշխատող:
- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում է 9 երեխա:
- Համայնքում գործում է մանկապարտեզ, ուր հաճախում են 20 երեխա:
- Համայնքում գործում է բուժկետ 1 աշխատող:

Համայնքն ունի մշտապես հասանելի պաշնոնական կայք, որը պարբերաբար թարմացվում է:

Ինչպես այլ համայնքներ, այնպես էլ մեր համայնքն ունի իր ուժեղ և թույլ կողմերը:

Համայնքի թույլ կողմերն են.

Խմելու ջրի բացակայություն
Հողաբաժնի քանակի քչություն
Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ
Ֆինանսական ռեսուրսների բացակայություն
Ծնելիության նվազում
Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ
Աշխատատեղերի պակաս
Վաղեմությունն անցած փայտյա երկհարկանի շինությունների առկայություն

Համայնքի ուժեղ կողմերն են.

Բանիմաց աշխատուժի առկայություն
Միջնակարգ դպրոցի առկայություն
Բուժկետի առկայություն
Մանկապարտեզի առկայություն
Հեռահաղորդակցության առկայություն
Գազաֆիկացման առկայություն
Մարզկենտրոնին մոտ լինելը
Համայնքով անցնող Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհ
Անխափան գործող Բազում-Վանաձոր երթուղի /9 երթ/
Փողոցային լուսավորություն
Աղբահանություն
Բարվոք ներհամայնքային ճանապարհներ
Բարձրագույն կրթությամբ բավարար աշխատուժ

Համայնքի բյուջեն կազմում է 48883,8 մլն դրամ.
որից դոտացիա՝ 28159.9 մլն դրամ
սեփական եկամուտներ՝ 8991,9 մլն դրամ
ֆոնդային բյուջե՝ 11732,0մլն դրամ:

Տեղական եկամուտները և կատարողականը ըստ հարկատեսակների

Հարկատեսակները	*Պլանով նախատեսված*	*Կատարվել է*	*%*
Հողի հարկ	1154,0	1283,0	111%
Գույքահարկ	5293,0	5349,0	101%
Վարձավճար	825,0	826,0	100%
Տեղական տուրք	217,9	223,6	102%
ՆՈՒՀ ՀՈԱԿ	1120,0	1096,0	
Աղբահանություն	370.0	370,0	100%
Այլ եկամուտներ	10,0	10,0	100%

Ընդամենը հավաքագրումը կատարվել է 102%

Չնայած մեր ջանքերի շնորհիվ հավաքագումը կատարվել է 102%-ով, սակայն հարկային բազայում ունենք այնպիսի անճշտություններ, որ բյուջեում առաջացրել է մեծ ապառքներ, որոնք անհուսալի են և հավաքագրումը դարձել է գերխնդիր՝ օրինակ թվով 68 անձանց անհայտ անվանումով կադաստրային ծածկագիրից առաջացել է 234039 դրամ անհուսալի ապառք, 18 մարդ մահացած որոնց հարազատները գտնվում են ՌԴ-ում ժառանգության իրավունքի փաստաթղթեր չունենալով 302633 դրամ գոյացել է ապառք, իսկ մյուսները գտնվում են ՌԴ-ում որոնց հետ կապը անհնարին է քանի որ նրանց չենք ճանաչում 815828 դրամ ապառք: Գոյացել է հողի հարկի և գույքահարկի անհուսալի ապառքներ, որոնց գույքը օտարվել է առանց համապատասխան ձևակերպման, որոնց սեփականատերերը մահացած են կամ գտնվում են ՌԴ-ում:

2019թ-ի ընթացքում բյուջեի միջոցներից 300,0 դրամ ներդրվել է համայնքի հետիոտնային ճանապարհի մաքրման համար: Ճանապարհը դարձել է բանուկ և դպրոցականների համար անցումային:

Համայնքի դպրոցին ընթացիկ դրամաշնորհ 500.0դրամ
Համայնքի ՆՈՒՀ ՀՈԿ-ին ընթացիկ դրամաշնորհ 7017.6
Հարազատին կորցրած 5 ընտանիքների տրամադրվել է 150.0 դրամ
Սոցիալապես անապահով 21 ընտանիքի տրամադրվել է 585.0 դրամ
Նորածին ունեցած 11 երիտասարդ մայրերի որպես խրախուսանք տրամադրվել է 115.0 դրամ

2019թ-ին իմ կողմից կայացվել է 91 որոշում, տրվել է 19 կարգադրություն:
2019թ-ին համայնքի ավագանու կողմից կայացվել է 12 նիստ, 78 որոշում:

Ունենք այնպիսի ծրագրեր որոնք համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ իրականացնել:
Խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարում:
Դպրոցի սպորտդահլիճի բացակայություն:

2017-2021թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված խմելու

համայնքի բյուջեի միջոցների հաշվին հնարավոր չէ իրականացնել: Դահլիճի բացակայության պատճառով երեխաները զրկված են մարզվելու հնարավորությունից:

Խմելու ջրի համար բազմաթիվ անգամ հակահամաճարակային տեսչության կողմից համայնքի խմելու ջրից նմուշները վերցրել են և ստուգումների արդյունքում պարզել են, որ ջուրը չի համապատասխանում խմելու ջրի նորմերին: Ես էլ իմ հերթին հայտարարություն եմ անում բնակչությանը, որ ջուրը եռացնելուց հետո օգտագործել, սակայն դա հնարավոր չէ: Դիմել եմ մարզպետարան և <<Լոռու ջրմուղ>> ՓԲ Ընկերությանը: ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության կոմիտեին խնդրել, որ Լեռնապատ-ջրաղբյուրից Վանաձոր քաղաքի Տարոն թաղամասը սնուցող ջրագծի ջրամբարից ջրաֆիկացնել նաև Բազում համայնքը: Սակայն ստացել ենք պատասխան, որ Բազում համայնքւ գտնվում է ծովի մակերևույթից 1580մ նիշի վրա, իսկ իմ կողմից նշված Վանաձոր քաղաքի թաղամասերը սնուցող Լեռնապատ-ջրաղբյուրը 1514մ նիշի վրա:
Հայ-գերմանական ֆինանսական համագործակցության ծրագրով կառուցված սնուցման համակարգը Լեռնապատ ջրաղբյուրից Վանաձոր քաղաքի Տարոն թաղամասերը, Քիմ գործարանի թաղամասը հաշվարկված է ըստ առկա սպառողների այսպիսով գյուղի ջրամատակարարումը հնարավոր չէ իրականացնել նույնիսկ մղման եղանակով ջրի աղության պատճառով:

Խնդիրը ներկայացրել ենք Վիոլա ջուր ընկերությանը պատասխանել է, որ հնարավորությունը միայն Հոբարձի համայնքի ջրագծից է, որ հնարավոր է համայնքը ջրաֆիկացնել: Այն էլ կապված է մեծ ծախսերի հետ, որի համար անհրաժեշտ է ներդրողներ: Համայնքի բնակչության 60%-ը կենցաղային պայմանների համար օգտվում է գետի ջրից, ոմանք էլ հարմար ժամերի ջուր են վերձնում նաև խմելու համար: Աստված մի արասցե, որ համաճարակ բռնկվի դա սպասելի է, քանի որ ամռանը հանգստացողներ են գալիս կազմակերպում միջոցառումներ և ամեն տեսակի աղբ լցնում են գետը աղտոտելով այն, որը և կառաջացնի անցանկալի երևույթներ:

Համայնքում ունենք 20 ընտանիք, որոնք բնակվում են վաղեմությունը անցած փայտյա խարխլված հանրակացարաններում, որոնց խնդիրը նույնպես համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ լուծել: Այդ ընտանիքներից ոչ ոք 1988թ-ի երկրաշարժի ժամանակ տուն չի կորցրել, որ գոնե դիմենք կառավարությանը ինչ որ կարգավիճակ ձեռք բերելու համար: Այդ ընտանիքների հարցը մնում է անորոշ, նրանք սոցիալապես անապահով ընտանիքներ են և ի վիճակի չեն լքել շենքը, այլապես կմնան դրսում: